

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

24.01.2014

Հարգելի հայրենակիցներ:

Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության եւ Արցախի ազատագրական մարտերի մեջ ծնված ու հասակ առած Հայոց հաղթական բանակն իր հիմնադրման 22-րդ տարին բոլորում է մարտունակ կեցվածքով, արդիական սպառազինությամբ, անընկճելի ուժով, հակառակորդին խաղաղություն պարտադրելու վճռականությամբ:

Նա է մեր պետականության ամենամուր պատվարը, Հայաստանի ու Արցախի անվտանգության երաշխավորը, համահայկական դարավոր իղծերի իրականացման գլխավոր միջոցը: Նրա կերտած հաղթանակները ոչ միայն փառքի նոր էջեր են գրել մեր ժողովրդի պատմության մեջ, այլ նաեւ խաղաղ ու ստեղծագործ ժամանակներ պարգևել հայ սերունդներին, ազատ ապրելու, համազգային բարօրության հասնելու հնարավորություն ստեղծել: Հայոց բանակի փառքի ճամփան է նրա հերոս նահատակների սուրբ անունները պարտադրում են ապրողներին՝ ավելի բարձր կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում, անձնապես ու հոգեպես միշտ լինել հայ զինվորի կողքին, թե ու թիկունք դառնալ նրան:

Հայոց բանակը, գլխավոր հրամանատարից մինչեւ շարքային զինվոր, մեր պանծալի, օր օրի առնականացող զավակն է, որի ծնունդը յուրաքանչյուր հայի հոգու տոնն է դարձել կազմավորման առաջին իսկ պահերից:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հայոց բանակի ստեղծման 22-րդ տարեդարձի առթիվ, մաղթում խաղաղ երկինք, քաջ առողջություն, երջանկություն եւ անսպառ հաջողություններ անձնական կյանքում, աշխատանքում, հայրենիքի ծառայության նվիրական գործում:

Ամենաբարի ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան